

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի ուղերձը Հայոց բանակի կազմավորման 28-րդ տարեդարձի առթիվ

Միրելի հայրենակիցներ

28 տարի առաջ մեր հայրենիքի համար ճակատագրական ու բախտորոշ պահին ստեղծվեց Հայոց բանակը, որը ոչ միայն կերտեց մեր պատմական հաղթանակների անշրջելի էջը, այլ նաև ապահովեց Հայաստանի ու Արցախի խաղաղությունն ու անվտանգությունը աշխարհաքաղաքական փոփոխությունների, պարտադրված պատերազմի ու արտաքին սպառնալիքների պայմաններում:

Այսօր էլ մեր բանակը պահպանում է իր մարտական ու բարոյական բարձր ոգին եւ միաժամանակ արդիականացնում ու զորացնում իր սպառազինությունը՝ տարածաշրջանում մեծապես նպաստելով խաղաղության պահպանմանը, զսպելով հակառակորդի զավթողական նկրտումները: Հայրենի կառավարության հետեւողական ջանքերի շնորհիվ ստիճանաբար բարելավվում են նաև մեր զինվորների կենցաղային պայմանները, բարձրացվում է սահմանապահ ղիրքերի պաշտպանունակությունն ու անվտանգությունը:

Շնորհավորում եմ բոլորիս Հայոց բանակի կազմավորման 28-րդ տարեդարձի առթիվ, մաղթում ամուր, հզոր եւ խաղաղ հայրենիք:

Լավագույն ցանկություններով՝

Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյան